ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» 12 2024 թ. N 12-1

«ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանի միջև 29.12.2023թ-ին կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-Վ-10» ծածկագրով «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի /այսուհետ մատակարարման պայմանագիր/ կատարումից միակողմ հրաժարվելու և մատակարարման պայմանագիրը 96 չափաբաժնի մասով մասնակի միակողմ լուծելու մասին:

04.12.2024թ ժամը 11:00

«Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ռուբեն Խլոյանս, հիմք ընդունելով խնամքի կենտրոնի սննդամթերքի համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ տնօրենի տեղակալ Արմեն Ավագյանի 03.12.2024թ զեկուցագիրը, ինչպես նաև N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-Վ-10» ծածկագրով 29.12.2023թ կնքված մատակարարման պայմանագրի 2.1.6 կետի պահանջները և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասը:

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն թվականի դեկտեբերի 04-ից միակողմ հրաժարվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանի միջև 29.12.2023թ-ին կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-Վ-10» ծածկագրով «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի կատարումից:

2. Սույն թվականի դեկտեմբերի 04-ից միակողմ մասնակի լուծել «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիրը:

3. Հանձնարարել «Վարդենիսի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների համակարգման պատասխանատու Ա. Համբարձումյանին սույն որոշման մասին սեղմ ժամկետներում ծանուցել Ա/Ձ Վարդան Հովհաննիսյանին և կատարել մատակարարման պայմանագրից բխող անհրաժեշտ բոլոր գործողությունները:

ՏՆՕՐԵՆ՝ Ռ. ԽԼՈՅԱՆ